ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

# ԿԱՆԹԵՂ

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

# GANTEGH

BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MOTRÉAL

ԿԻՐԱԿԻ 7 Ապրիլ 2019 | 105 | DIMANCHE, 7 Avril 2019



## ԳԱԼՍՏԵԱՆ ԿԻՐԱԿԻ

### ԱՒԵՏՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

615 stgregorychurch@gmail.co Quebec, Canada H2V 3H2
secretary@saintgregory.ca | www.saintgregory.ca

# ԳԱԼՍՏԵԱՆ ԿԻՐԱԿԻ

## LA VENUE

Աստուածաշունչի Ընթերցումներ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵՆԷՆ
52.7-10
ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ
ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ 2-ՐԴ ՆԱՄԱԿԷՆ
6.16-7.1
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ
1.26-38

Les lectures de la Bible d'aujourd'hui :
2 Corinthiens 6.16-7.1
Luc 1.26-38

Պատարագիչ՝
ԱՐԺ. Տ. ՀԱՅԱՐԻ ՔՀՆՅ.ԹԱՆԱՇԵԱՆ
Célébrant:
RÉV. PÈRE HAYARI TANASHIAN

Առաւօտեան Ժամերգութիւն 9:30-ին
Office Matines à 9 :30
Ս. Պատարագ ժամը 10:30-ին
La Sainte Messe à 10:30
Հոգեհանգստեան Պաշտօն կէսօրին
Office de Requieme à Midi

Deacons - Acolytes

Choirmaster: Mr. Sarkis Barsemian
Organists: Mr. Karen Manucharyan
Mrs. Houri Bedrossian

# ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

**LES LECTURES DE DIMANCHE**



**THE SUNDAY READINGS**

## ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԷՆ (6.16-7.1)

Եւ ի՞նչ յարմարութիւն ունի Աստուծոյ տաճարը կուռքերուն հետ. վասն զի դուք կենդանի Աստուծոյ տաճարն էք. ինչպէս Աստուած ըսաւ, թէ «Անոնց մէջ պիտի բնակիմ ու անոնց մէջ պիտի քալեմ եւ անոնց Աստուած պիտի ըլլամ ու անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան»: «‘Անոր համար ելէ՛ք անոնց մէջէն ու զատուեցէ՛ք’, կ’ըսէ Տէրը, ‘պիղծ բանի մի՛ դպչիք’». «‘Ու ես ձեզ պիտի ընդունիմ’»: «‘Եւ ես ձեզի Հայր պիտի ըլլամ ու դուք ինծի տղաքներ ու աղջիկներ պիտի ըլլաք’, կ’ըսէ Ամենակալ Տէրը»:

Ուստի, սիրելինե՛ր, որովհետեւ մենք այս խոստումները ունինք, մեր անձերը մարմնի ու հոգիի ամէն կերպ պղծութենէ մաքրենք եւ սրբութիւնը կատարելագործենք Աստուծոյ վախովը:

## ԱՒԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ (1.26-38)

Վեցերորդ ամսուն մէջ Գաբրիէլ հրեշտակը Աստուծմէ ղրկուեցաւ Գալիլիայի մէկ քաղաքը՝ որուն անունը Նազարէթ էր, Կոյսի մը՝ մարդու մը նշանուած, որուն անունը Յովսէփ էր, Դաւիթին տունէն: Այն կոյսին անունը Մարիամ էր: Հրեշտակը անոր երթալով՝ ըսաւ. «Ողջոյն քեզ, ո՛վ շնորհընկալ կոյս, Տէրը քեզի հետ է: Դուն կիներուն մէջ օրհնեալ ես»: Մարիամ զանիկա տեսնելով, անոր խօսքին վրայ շփոթեցաւ ու ինքնիրեն կը մտածէր թէ ի՞նչպէս բան պիտի ըլլայ այս ողջոյնը: Հրեշտակը անոր ըսաւ. «Մի՛ վախնար, Մա՛րիամ, վասն զի Աստուծմէ շնորհք գտար: Ահա պիտի յղանաս ու որդի մը պիտի ծնանիս եւ անոր անունը Յիսուս պիտի դնես: Անիկա մեծ պիտի ըլլայ ու Բարձրեալին Որդի պիտի կոչուի: Տէր Աստուած անոր պիտի տայ իր հօրը Դաւիթին աթոռը ու Յակոբին տանը վրայ յաւիտեան պիտի թագաւորէ: Անոր թագաւորութիւնը վերջ պիտի չունենայ»: Մարիամ ըսաւ հրեշտակին. «Ի՞նչպէս պիտի ըլլայ այդ բանը, որովհետեւ ես այր մարդ չեմ գիտեր»: Հրեշտակը պատասխան տալով՝ ըսաւ անոր. «Սուրբ Հոգին պիտի գայ քեզի ու Բարձրեալին զօրութիւնը քու վրադ հովանի պիտի ըլլայ. ուստի այն քեզմէ ծնանելու սուրբը Աստուծոյ

Որդի պիտի կոչուի: Ահա քու ազգականդ Եղիսա-բէթ՝ անիկա ալ իր պառաւութեանատենը արու զաւակով մը յղի է: Ասիկա այն ամուլ ըսուածին վեցերորդ ամիսն է, Վասն զի Աստուծոյ քով բնաւ անհնարին բան մը չկայ»: Մարիամ ըսաւ. «Ահա ես Տէրոջը աղախինն եմ, քու ըսածիդ պէս թող ըլլայ ինծի»: Ու հրեշտակը անոր քովէն գնաց»:

## 2 CORINTHIENS 6.16-7.1

Et quelle convenance y a-t-il du Temple de Dieu avec les idoles? car vous êtes le Temple du Dieu vivant, selon ce que Dieu a dit : j'habiterai au milieu d'eux, et j'y marcherai; et je serai leur Dieu, et ils seront mon peuple.

C'est pourquoi sortez du milieu d'eux, et vous en séparez, dit le Seigneur; et ne touchez à aucune chose souillée et je vous recevrai;

Et je vous serai pour père, et vous me serez pour fils et pour filles, dit le Seigneur Tout-puissant.

Or donc [mes] bien-aimés, puisque nous avons de telles promesses, nettoyons-nous de toute souillure de la chair et de l'esprit perfectionnant la sanctification en la crainte de Dieu.

## LUC 1.26-38

Or au sixième mois, l'Ange Gabriel fut envoyé de Dieu dans une ville de Galilée, appelée Nazareth; Vers une Vierge fiancée à un homme nommé Joseph, qui était de la maison de David; et le nom de la Vierge était Marie. Et l'Ange étant entré dans le lieu où elle était, lui dit : je te salue, [ô toi qui es] reçue en grâce; le Seigneur est avec toi; tu es bénie entre les femmes. Et quand elle l'eut vu, elle fut fort troublée à cause de ses paroles; et elle considérait en elle-même quelle était cette salutation. Et l'Ange lui dit : Marie, ne crains point; car tu as trouvé grâce devant Dieu. Et voici, tu concevras en ton ventre, et tu enfanteras un fils, et tu appelleras son nom JESUS. Il sera grand, et sera appelé le Fils du Souverain, et le Seigneur Dieu lui donnera le trône de David son père. Et il régnera sur la maison de Jacob éternellement, et il n'y aura point de fin à son règne. Alors Marie dit à l'Ange : comment arrivera ceci, vu que je ne connais point d'homme? Et l'Ange répondant lui dit : le Saint-Esprit surviendra en toi, et la vertu du Souverain t'enombrera; c'est pourquoi ce qui naîtra [de toi] Saint, sera appelé le Fils de Dieu. Et voici, Elizabeth, ta cousine, a aussi conçu un fils en sa vieillesse; et c'est ici le

sixième mois de la grossesse de celle qui était appelée stérile. Car rien ne sera impossible à Dieu. Et Marie dit : voici la servante du Seigneur; qu'il me soit fait selon ta parole! Et l'Ange se retira d'avec elle.

## Եկեղեցական Տօնացոյց Յառաջիկայ Շաբթուան

## Ապրիլ – Avril

8, Երկուշաբթի – ԼԶ. Օր Մեծի Պահոց
Lundi 8 – 36ème jour du Jeûne du Carême

9, Երեքշաբթի – ԼԷ. Օր Մեծի Պահոց
Mardi 9 - 37ème jour du Jeûne du Carême

10, Չորեքշաբթի –ԼԸ. Օր Մեծի Պահոց
Mercredi 10 - 38ème jour du Jeûne du Carême

11, Հինգշաբթի – ԼԹ. Օր Մեծի Պահոց
Jeudi 11 – 39ème jour du Jeûne du Carême

12, Ուրբաթ - Խ. Օր Մեծի Պահոց
Vendredi12 - 40ème jour du Jeûne du Carême

13, Շաբաթ
Յիշատակ Յարութեան Ղազարու
Samedi 13
Commémoration de la résurrection de Lazare.

### Ուշադրութիւն Մեր Սիրելի Հաւատացեալներուն

Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխու-թիւն, հաճեցէք ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066, մեր հաղորդակցութիւնը կարենալ պահելու համար կանոնաւոր, շարունակական եւ այժմէական ընթացքի մէջ:
Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:

*Ծխական Խորհուրդ*

### Attention to our beloved parishioners

If you have changes in your address, e-mail or phone numbers please feel free to convey your new data to the Church office at (514) 279-3066, to maintain our communication in a regular, continuous, and up-to-date course.

Thank you for your cooperation.



# ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

## ԱՂՕԹՔ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ

Սրտի խորերէն խօսք Աստուծոյ հետ

Ահա հոգիիս կարկամած բազուկները:
Քու անունիդ կը կարկառեմ, ով Հզօր,
Առողջացուր զայն, ինչպէս առաջին անգամ,
Երբ փափկութեան դրախտի մէջ կեանքի պտուղը կը կթէի.
Գօսացած կնոջ պէս, թշուառ հոգիս մեղքին կքումով
Եւ սատանայական բուռն կապերով կաշկանդուած,
Ի կոր կործանած՝ գետին կը նայի,
Որպէսզի երկնայինիդ ողջոյնը չընդունի.
Ինծի՛ խոնարհէ, միայն Ողորմած
Որպէսզի ինծի պէս վար ինկած,
Չորացած բանաւոր ծառը վեր կանգնեցնես
Ու բարեկրօն վայելչութեամբ ծաղկեցնես,
Սուրբ մարգարէին ըսածին համեմատ:
(Շարունակելի)

## PRIÈRE EN DEMANDE DE BONNE SANTÉ

Paroles à dieu des profondeurs du cœur

Voici que je Te présente le bras desséché de mon âme;
En Ton Nom, ô Dieu Puissant, rends-le-sain comme autrefois,
Lorsque dans le jardin de délices je cueillais le fruit de vie.
Liée, paralysée, courbée comme la femme qui souffrait,
Mon âme malheureuse reste impuissante à se redresser :
Elle fixe la terre, sous le poids du péché, à cause des durs liens de Satan,
De peur qu'elle ne reçoive ton salut céleste.
Penche-Toi vers moi, seul Miséricordieux,
Pour me relever, humble arbre pensant qui suis tombé,
Et me faire refleurir moi qui suis desséché, en beauté et splendeur,
Selon les paroles divines du saint prophète.
(À suivre)

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ

**DON À L'ÉGLISE** — **DONATION FOR THE CHURCH**

CHURCH:

MITCHINK:

Mr. & Mrs. Simon & Betty Sarayli $70, Mrs. Silva Tursucu $20

ALTAR FLOWERS:

Mr. & Mrs. Mihran & Yercanik Ecityan $40

GOMIDAS TBRATZ TASS 60$^{TH}$ ANNIVERSARY BOOKLET:

Mr. Aram Der Movsesyan $100

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE DR. ARMEN PARUNAK

Mrs. Ani Parunak $1000, Mr. & Mrs. Viken & Aylin Paragamyan $500, Mrs. Emma Sogoian $400, Mr. & Mrs. Ayk & Rina Bagdasarian, Mr. & Mrs. Garo & Nevart Paragamyan, Mr. & Mrs. Ari & Beatrice Bagdasaryan $200, Mr. & Mrs. Vahe & Tania Emmian, Mr. Vahe Nahabedian, Mr. & Mrs. Diran & Vilma Attarmigiroglu, Mr. Berc Dulgeroglu & Mr. Nurhan Dulgeroglu, Violette de NDS $150, Mr. Vahé Keresteciyan, Mrs. Hilda Damla, Mr. & Mrs. Arman & Cathy Bosnakyan, Mrs. Najda Bosnakyan, Mrs. Anni Seropian, Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian, Mr. & Mrs. Asot Kasparyan, Mr. & Mrs. Dikran & Rima Derderyan, Mr. Stepan Kamber $100, Mrs. Anahid Islemeciyan $60, Mr. & Mrs. Alex & Alice Arabian, Mr. & Mrs. Nuran & Arlin Attarmigiroglu, Mr. Can Garbis Sahinyan, Mrs. Janet Brownlee, Mr. & Mrs. Ervin & Karin Demircibasiyan, Mr. Kamer Kalenderoglu, Mrs. Klodet Koceyan, Mr. & Mrs. Kevork & Maral Partamian, Mr. Ayk Comlekcioglu, Mr. & Mrs. Alen & Vicky Koceyan, Mrs. Eugenie Kasparyan, Mr. & Mrs. Hagop & Anoush Kazan $50, Mr. & Mrs. Berc & Emma Essen $40, Mrs. Sona Kevorkyan $35, Mr. & Mrs. Minas & Ani Misisyan $30.

HOKEHANKISD:

THE LATE LOUISE MANOOGIAN SIMONE:

Mr. & Mrs. Varoujan & Silva Mangassarian $100, Mr. & Mrs. Sako & Ani Mardirossian $20

THE LATE ANI KERESTECIYAN:

Mr. & Mrs. Paul & Nathalie Chamourian, Mr. Vahé Keresteciyan $200, Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian $100, Mrs. Zabel Artar, Mr. & Mrs. Diran & Vilma Attarmigiroglu, Mr. & Mrs. Krikor & Irma Merekyan, Mrs. Aghavni Kologlu, Mrs. Hilda Kepekci, Mr. & Mrs. Roupen & Meline Arsever, Dr. Arto Demirjian, Mrs. Germaine Koleoglu, Mrs. Rita Karakas & Anahit Tavityan, Mr. & Mrs. Avedis & Mary Basmacioglu, Mrs. Magali Lafferier $50, Mr. Ara Gerikyan $40, Mr. Levon Simonyan, Mrs. Nadia Kurkciyan, Mr. Asot Kasparyan $30, Mrs. Irma Basmajian $25

THE LATE JIRAIR KICHIAN:

Mr. & Mrs. Boghos & Sirvart Kichian $100, Mr. & Mrs. Varoujan & Silva Mangassarian $50

THE LATE HAIG MISAKYAN:

Mrs. Chake Berberian $100

THE LATE VATCHE KOZADJIAN:

Mr. Hrag Kozadjian $60, Mr. Harout Chikian $40

THE LATE VERKIN YANCI TOR:

Mrs. Elmas Kisa, Mr. Sylvain Lahaie $200

THE LATE MAKSUT HUDAVERDI:

Mr. Vahan Hudaverdi $100

## ՇԱԲԹՈՒԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

«Որպէսզի շրթունքները գեղեցիկ ըլլան, միայն բարի խօսքեր ըսէք:

Որպէսզի աչքերը գեղեցիկ ըլլան, մարդոց մէջ միայն լաւը փնտռեցէք:

Որպէսզի մարմինը սլացիկ ըլլայ, ուտելիքը կիսուեցէք սովահարներու հետ: Կնոջ գեղեցկութիւնը զգեստի մէջ չէ, որ կը կրէ զայն, անոր կազմուածքին եւ սանտրուածքին մէջ չէ: Կնոջ գեղեցկութիւնը պիտի երեւայ անոր աչքերուն մէջ: Այդ անոր սրտին դուռն է, այն վայրն է, ուր կ'ապրի սէրը: Կնոջ իրական գեղեցկութիւնը արտացոլուած է անոր հոգիին մէջ: Կնոջ գեղեցկութիւնը կ'արտայայտուի անոր հոգատարութեան եւ սիրոյ մէջ: Կնոջ գեղեցկութիւնը կը կատարելագործուի այնքան աւելի, որքան որ տարիները կ'անցնին:

*Ս. Յովհան Ոսկեբերան*

# ՏՕՆԵՐ

Շաբաթ, 6 Ապրիլ 2019

## Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ՍՈՍԿԱԼԻ ՉԱՐՉԱՐԱՆՔՆԵՐՈՒ ՈՒ ՎԻՐԱՊ ՄՏՆԵԼՈՒ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՕՐ

Այս տօնը հայոց առաջին կաթողիկոս Ս. Գրիգոր Լուսաւորչին նուիրուած յիշատակութեան երեք օրերէն առաջինն է տարուայ ընթացքին: Ըստ Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ տօնացոյցին՝ կը նշուի Մեծ Պահքի 6-րդ Կիրակիին նախորդ շաբաթ օրը: Տօնը կը կատարուի ի յիշատակ Խոր Վիրապին մէջ Ս. Գրիգոր Լուսաւորչին կրած չարչարանքներուն: Ըստ պատմական աղբիւրներու՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչը Անակ Պարթեւ իշխանին որդին էր: Սպաննելով Հայոց Արշակունի Խոսրով թագաւորին, Անակ Պարթեւը կը սպաննուի Հայ իշխաններու կողմէ: Որդին՝ Գրիգորը, կը մեծնայ եւ կրթութիւն կը ստանայ Կեսարիոյ մէջ՝ դաստիարակուելով իբրեւ բարեպաշտ Քրիստոնեայ: Հետագային կը դառնայ Խոսրով Արքայի որդւոյն՝ Տրդատ թագաւորին արքունի դիւանապետը: Սակայն տեղեկանալով, որ Գրիգորը Քրիստոնեայ է, ինչպէս նաեւ արքայասպան Անակի որդին, Տրդատ Արքան անոր չարչարանքներու կ' ենթարկէ եւ կը նետէ Խոր Վիրապի ստորգետնեայ զնտանին մէջ: 4-րդ դարու ընդհանրական եկեղեցւոյ Սուրբ Յովհան Ոսկեբերան Հայրապետը Ս. Գրիգոր Լուսաւորիչին նուիրուած իր ներբողին մէջ գրած է. «Յիշեցէք եւ Անոր համբերութիւնը Խոր Վիրապին մէջ, որքան նեղութիւններով դառնացած էր... Իսկ ո՞վ կրնայ խօսքով պատմել երանելիին անսահման ճգնութեան մասին, կամ օրինակով ցոյց տալ Անոր անտանելի նեղութիւնը, որ կ'ապրէր իժերու եւ քարբերու մէջ, ուր ո՛չ զրուցակից կար, ո՛չ վշտակցող բարեկամ, ո՛չ օգնա-կան, ո՛չ մխիթարող եւ ո՛չ ծառայող: Ան կը համբերէր մեծ ժուժկալութեամբ, իբրեւ կենդանի դրուած գերեզմանին մէջ, անտուն, մերկ, գիշեր-ցերեկ, ամռան շոգին եւ ձմռան սառնամանիքին, քանզի մօտ էր Աստուծոյն»:

Խոր Վիրապին մէջ կրած 13 տարիներու չարչարանքներէն յետոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչը, դուրս գալով ստորգետնեայ զնտանէն, Քրիստոսի լոյսը կը տարածէ Հայոց աշխարհին մէջ՝ դառնալով Պետականօրէն ճանչցուած Հայ եկեղեցւոյ Առաջին Հովուա-

պետը: Ս. Գրիգոր Լուսաւորիչի յիշատակը, իբրեւ համաքրիստոնէական սուրբ, կը տօնեն նաեւ՝ Քրիստոնեայ միւս եկեղեցիները:

**ՇԱԲԹՈՒԱՆ ՏՕՆԵԼԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ**

Ս. Գրիգոր Լուսաւորչի Մուտն ի Վիրապ տօնին առթիւ կը շնորհաւորենք բոլոր Գրիգոր, Կրէկըրի, Կրէկ, Քըրք եւ Գօգօ անունները կրող անձերուն անուանակոչութիւնը:
CELEBRATED NAMES: Krikor, Gregory, Greg, Kirk & Koko.

Կիրակի, 7 Ապրիլ 2019

## ԳԱԼՍՏԵԱՆ ԿԻՐԱԿԻ

Մեծ Պահքի վեցերորդ Կիրակին կը կոչուի Գալստեան: Այս Կիրակին Յիսուս Քրիստոսի Առաջին Գալստեան՝ մարդեղութեան յիշեցումն է: Հաստատուեցաւ այն ճշմարտութիւնը, որ Փրկչի Գալուստով հնարաւորութիւն ընձեռնուեցաւ մարդկութ-եան առաջնորդուիլ փրկութեան այդ ուղիով: Այս Կիրակին մի-եւնոյն ժամանակ Երկրորդ Գալստեան խորհուրդը ունի:

Աւետարաններուն մէջ եւ առաքեալներու թուղթերուն մէջ Երկրորդ Գալուստին նուիրուած բազմաթիւ հատուածներ եւ անդրադարձեր կան: Տէրը կը զգուշացնէ Երկրորդ Գալուստը եւ անոր նախանշաններուն մասին. «Զգոյշ եղէք, գուցէ մէկը ձեզ խաբէ, որովհետեւ շատերը կու գան իմ անունովս ու կ'ըսեն, թէ՝ ես եմ Քրիստոսը. եւ շատերուն կը մոլորեցնեն: Պիտի լսէք պատերազմներու ձայներ եւ պատերազմներու լուրեր…

Ազգ ազգի դէմ պիտի ելլէ, եւ թագաւորութիւն՝ թագաւորութեան դէմ, եւ պիտի ըլլան սով, համաճարակ ու տեղ-տեղ երկրաշարժներ: Սակայն այս ամէնը սկիզբն է երկանց … Եւ բազմաթիւ սուտ մարգարէներ պիտի ելլեն ու շատերուն պիտի մոլորեցնեն: Եւ անօրէնութեան շատացումով՝ շատերու սէրը պիտի ցամքի: Բայց ով որ մինչեւ վերջ համբերէ, ան պիտի փրկուի» (Մատթ. 24: 4-13): Գալստեան Կիրակիին խորհուրդը համբերութեան, բարեպաշտութեան, պարկեշտութեան կոչն է, որովհետեւ հոգիի բիւրեղացմամբ եւ ճշմարիտ հաւատքով մարդ կրնայ սպասել Տիրոջ Հրաշափառ Գալստեան: Քրիստոնէական բոլոր եկեղեցիներն ալ ունին Գալստեան կոչուող Կիրակի:

# Holidays

Saturday, April 6, 2019

## COMMEMORATION OF ST. GREGORY THE ILLUMINATOR'S TORMENTS AND COMMITMENT TO THE PIT

This feast is the first one among the three commemoration days dedicated to the memory of St. Gregory the Illuminator, the first Catholicos of All Armenians. According to the Armenian Church Calendar, it is celebrated on the eve of the Fifth Sunday during the period of Great Lent. The feast is dedicated to the torments which St. Gregory suffered during his imprisonment.



According to historical sources, St. Gregory the Illuminator was the son of Anak Partev, a knight and nobleman, who killed the Armenian King Khosrov Arshakouni. In retaliation, Anak is executed by the Armenians. His son, Gregory, lived and studied in Caesarea, and was brought up as a pious Christian. Gregory returns to Armenia as an adult and becomes a member of the royal court. King Tiridates (Trdat), the son of King Khosrov and heir to the throne, appoints Gregory as the Chancellor of the Armenian Kingdom. Tiridates, learning that Gregory is a Christian and the son of Anak, subjects him to severe tortures and commits Gregory to death, by imprisoning him in a deep underground pit.

In 301 A.D., after spending 13 years in the pit, St. Gregory the Illuminator is freed from the dungeon and emerges to spread the Light of Christ in Armenia. He thus becomes the first pontiff of the Armenian Church, baptizes the royal family, and evangelizes the whole of the Armenian Nation. Armenia becomes the first nation in the world to officially proclaim Christianity as her state religion.

St. Gregory the Illuminator is recognized by all of Christendom as a Saint, and he is commemorated in all traditional Christian Churches.

Sunday, April 7, 2019

# SUNDAY OF THE ADVENT

Early in our journey through Great Lent we observed the Sunday of the Expulsion, which retold the story of mankind's first disobedience, our exile from paradise, and the beginning of humanity's long history of separation from God.

In a nice expression of symmetry and resolution, Lent concludes with the Sunday of the Advent: that is, the coming of Jesus Christ, through whom God entered human history and restored what had been lost in the exile from Eden.

The Advent calls to mind the birth and revelation of our Savior, his subsequent sacrifice for mankind, and his victory over sin and death. As the last Sunday of Lent, this day is especially devoted to the Second Coming of Jesus Christ, reminding us that he is our eternal Lord and King, and that just as everything once began with God, so too will everything one-day end with Him.

What Is Advent?

"Establish your hearts, for the coming of the Lord is at hand." (James 5:8)

*Advent means "coming"—the coming of Christ. It is the 50-day period during which we prepare to celebrate the Nativity and Theophany of our Lord and Savior Jesus Christ. In the Armenian Church, Advent lasts approximately two weeks longer than it in the Western churches, hence the Armenian word for the season: Hisnag, "a 50-day period." It is a time for us to think of the why of Christmas—why the greeting cards, the decorations, the gifts, the family gatherings? A time to look within our hearts to see if there is anything that stands between us and the Good News of Jesus' birth.*

During Advent, we can rededicate ourselves to Christ through our actions, thoughts, and prayers. This is a good time for us to improve our habits and offer them as gifts to God. Perhaps Advent can also be an occasion to discover God's gifts all around us. We need to have an open heart to receive Christ—God's greatest gift of all! We complain that Christmas is too "commercial," but there is a way to live out the real "reason for the season."



## Աւետումն Ս. Աստուածածնի

Ամէն տարի Ապրիլ 7-ին Հայ Առաքելական Ս. Եկեղեցին կը նշէ Ս. Մարիամ Աստուածածնի Աւետման տօնը:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը այդ օրը հռչակած է, որպէս մայրերու եւ մայրութեան բերկրանքին սպասող կանանց օրհնութեան օր:

Ապրիլ 7-ին բոլոր եկեղեցիներուն մէջ Ս. Պատարագ կը մատուցուի եւ մայրուեյան բերկրանքին սպասող կանանց օրհնութեան կարգ կը կատարուի:

«Վեցերորդ ամսուն Գաբրիէլ հրեշտակը Աստուծոյ կողմէ ուղարկուեցաւ Գալիլիոյ քաղաքներէն մէկը, որուն անունը Նազարէթ էր, կոյսի մը մօտ, որ նշանուած էր Յովսէփ անունով մարդու մը հետ՝ Դաւիթի տունէն: Եւ այդ կոյսին անունը Մարիամ էր: Եւ հրեշտակը, գալով Անոր մօտ, ըսաւ. «Ուրախացի՛ր, ո՛վ շնորհընկալ, Տէրը քեզի հետ է... Մի՛ վախնա՛ր, Մարիա՛մ, որովհետեւ Աստուծմէ դուն շնորհ գտար: Եւ ահա՛ դուն կը յղիանաս եւ կը ծնանիս որդի մը եւ Անոր անունը Յիսուս կը դնես: Ան մեծ պիտի ըլլայ եւ Բարձրեալի որդի պիտի կոչուի: ... Ու Անոր թագաւորութիւնը վախճան պիտի չունենայ»: (Ղուկ. Ա 26:33):

Հրեշտակապետին աւետիսը անակնկալ էր Մարիամին համար, քանի որ ան դեռ տղամարդ ճանչցած չէր: Սակայն, իմանալով իրողութիւնը, ըսաւ. «Ահաւասիկ ես կը մնամ Տիրոջ աղախինը...» (Ղուկ. Ա:38):

Այս է Աւետման այն գեղեցիկ պատմութիւնը, որ փոխանցած է մեզ Սուրբ Գիրքը:

# ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

**SERVICE POUR LE REPOS DE L'ÂME**

**SERVICE FOR THE REPOSE OF SOUL**

ԿԻՐԱԿԻ, 7 Ապրիլ 2019

Առաջնորդ Սրբազան Հօր թելադրանքով եւ փափաքով Հոգեւոր Հովիւին, Ծխական Խորհուրդին եւ Յարակից մարմիններուն Խնդրանքով,
հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի՝
Ապրիլեան Քառօրեայ Պատերազմին
Զոհաբերուած Ազատամարտիկներու Յիշատակին

**Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի**

Տիկին Ժագլին Առաքելեանի,
Տէր եւ Տիկին Ռուբէն եւ Սօսի Առաքելեաններու
եւ զաւակներուն՝ Սարոյի եւ Կարէնի,
Տիար Յարութ Առաքելեանի
եւ զաւակներուն՝ Լարայի եւ Շանթի,
Տ. եւ Տիկ. Անդրանիկ եւ Մարիանա Գասնաքեաններու եւ զաւակներուն՝ Շահանի եւ Ալեքի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝

**ԿԱՐՊԻՍ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ (GARBIS ARAKELIAN)**

Մահուան 40-ին առիթով
սուրճի սպասարկութիւն *Մարի Մանուկեան* սրահին մէջ:

Պետիկեան եւ Անթիքաճիօղլու ընտանիքներու,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի իրենց սիրեցեալ կնոջ, մօր, մեծ մօր եւ քրոջ՝

**ՍԵԴԱ ՊԵՏԻԿԵԱՆԻ (SETA BEDIKYAN)**

Մահուան 40-ինառիթով
(Հոգեճաշի սպասարկութիւն Պոլսահայ Միութեան մէջ):

Տ. եւ Տիկ. Աւետիս Ճիհանեանի,
Տ. եւ Տիկ. Միհրան Ճիհանեանի,
Պր. Հրայր Ճիհանեանի եւ իր զաւակներուն,
Օրդ. Մաւլէն Ճիհանեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի իրենց սիրեցեալ ծնողաց, մեծ ծնողաց եւ եղբօր՝

**ԱՆԴՐԱՆԻԿ ՃԻՀԱՆԵԱՆԻ (ANTRANIG DJIHANIAN)**

Մահուան 11-րդ տարելիցին առիթով

ԵՒ

**ՎԵՐՈՆ ՃԻՀԱՆԵԱՆԻ (VERON DJIHANIAN)**

Մահուան 7-րդ տարելիցին առիթով

Տիկ. Սօնիա Պարոնեանի եւ զաւակներուն՝
Ալեքսայի, Քէյվընի եւ Գարինայի,
Տ. եւ Տիկ. Տօմինիք եւ Նորա Գէմբիթէլիի
եւ զաւկին՝ Ճեմայի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի իրենց սիրեցեալ մօր եւ մեծ մօր՝

**ԱՆԻ ԿԷՕՔՃԵԱՆ ՊԱՐՈՆԵԱՆԻ**
**(ANI GEUKJIAN BARONIAN)**

Մահուան 4-րդ տարելիցին առիթով

## ԽՈՐՀՈՒՐԴ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆԻ

Այն հաւատացեալները, որոնք իրենց հանգուցեալ սիրելիին կամ հարազատին համար ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ կը խնդրեն, պէտք է նկատի ունենալ թէ անհրաժեշտ է Սուրբ Պատարագի սկիզբէն ներկայ գտնուիլ եկեղեցի եւ մասնակցիլ աղօթքներուն. վասն զի, Սուրբ Պատարագի վերջաւորութեան կատարուելիք Հոգեհանգստեան Պաշտօնէն զատ, Պատարագիչ քահանան իր լուռ աղօթքներուն մէջ եւս կը յիշէ մեր բոլոր ննջեցեալներն ու յատկապէս անոնք՝ որոնց համար խնդրանք մատուցուած է:

# ՍԲ. ՅԱՐՈՒԹԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ

## ԿԻՐԱԿԻ,14 ԱՊՐԻԼ 2019

## ԾԱՂԿԱԶԱՐԴ
## ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՕՐ

Առաւօտեան ժամերգութիւն - ժամը 9:30
Ս. Պատարագ - ժամը 10:30
Դռնբացէք - ժամը 12:30
Յաւարտ Ս. Պատարագի Մանուկներու Օրհնութեան կարգ
եւ աւանդական ճաշկերոյթ հիւրընկալութեամբ «Կամար»
Երիտասարդական Միութեան «Մարի Մնաուկեան» սրահին մէջ:

## ԱՒԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ, 18 ԱՊՐԻԼ 2019

## ԿԱՐԳ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ, ՈՏՆԼՈՒԱՅ,
## ԿԱՐԳ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆ, ԽԱՒԱՐՈՒՄ

Ս. Հաղորդութեան Պատարագ - ժամը 10:30
Ոտնլուայ - երեկոյեան ժամը 7:00
Մասնակցութեամբ Հ.Բ.Ը.Մ. Արմէն Քէպէք Ալեք Մանուկեան
Վարժարանի աշակերտութեան,
Պահքի Ընթրիք Պատրաստութեամբ՝
Տիկնանց Յանձնախումբին «Մարի Մանուկեան» սրահին մէջ,
Կարգ Խաչելութեան, Խաւարում- ժամը 9:00:

Ս. Պատարագի, Ոտնլուայի եւ Կարգ Խաչելութեան
արարողութիւնները կը կատարէ
Հոգեւոր Հովիւ՝ ԱՐԺ. Տ. ԴԱՒԻԹ ՔՀՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

## ԱՒԱԳ ՈՒՐԲԱԹ, 19 ԱՊՐԻԼ 2019

Կարգ Թաղման—ժամը 7:00

## ՇԱԲԱԹ, 20 ԱՊՐԻԼ 2019

## ՃՐԱԳԱԼՈՅՑ Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ

Երեկոյեան ժամերգութիւն—ժամը 5:30
Ս. Պատարագ—ժամը 6:00
Ս. Գրային Ընթերցումներ Հ.Բ.Ը.Մ. Արմէն Քէպէք Ալեք
Մանուկեան Վարժարանի աշակերտութեան կողմէ:

## <u>ԿԻՐԱԿԻ, 21 ԱՊՐԻԼ 2019</u>

### ՍԲ. ԶԱՏԻԿ

Առաւօտեան ժամերգութիւն—ժամը 9:30
Ս. Պատարագ - ժամը 10:30
Պատարագիչ՝
ԱՐԺ. Տ. ԴԱՒԻԹ ՔՀՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
Հոգեւոր Հովիւ
Ս. Պատարագի երգեցողութիւնը կը կատարէ
«Կոմիտաս» Դպրաց Դասը
Յաւարտ Ս. Պատարագի
աւանդական Ս. Զատկուայ ճաշկերոյթ
«Մարի Մանուկեան» սրահին մէջ,
Մուտքի նուէր՝ $30

## <u>ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 22 ԱՊՐԻԼ 2019</u>

### ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ

Հոգեհանգիստ վասն համօրէն ննջեցելոցն առաւօտ. ժամը 11:00
Հոգեհանգիստ խնդրելու համար հեռաձայնել
Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066 թիւին:

# <u>CALANDRIER DE PÂQUES</u>

## DIMANCHE DES RAMEAUX, 14 AVRIL 2019
## JOUR DE BÉNÉDICTION DES ENFANTS

Office de matin - 09:30
La Sainte Messe - 10:30
La Cérémonie de l'ouverture de l'Autel - 12:30
Après la Messe réception traditionnelle à la salle ‘Marie Manoogian’

## JEUDI SAINT, 18 AVRIL 2019
## RITE DE REPENTANCE, LAVEMENT DES PIEDS, NUIT DES TENEBRES

La Sainte Messe - 10:30
Lavement des Pieds - 19:00
Avec la participation des élèves
de l'école Armen Québec Alex Manoogian de l'U.G.A.B.
Souper de Carême à la salle ’Marie Manoogian’
Nuit des ténèbres—21:00
La Sainte Messe, le Lavement des pieds et La Nuit des ténèbres seront

Célèbres par
R.P. DAVID MARGARYAN
Curé Paroissial

**VENDREDI SAINT, 19 AVRIL 2019**
Enterrement—19:00

**SAMEDI SAINT, 20 AVRIL 2019**
Office du Soir- - 17:30
La Sainte Messe-18:00
Lectures par les élèves de l'école Armen Québec
Alex Manoogian de l'U.G.A.B.

**PÂQUES - DIMANCHE, 21 AVRIL 2019**
Office de matin - 09:30
La Sainte Messe - 10:30
La Messe sera célébrée par
R.P. DAVID MARGARYAN, Curé Paroissial
Après La Sainte Messe réception traditionnelle
Dans la salle 'Marie Manoogian' - prix d'entrée $30

**LUNDI, 22 AVRIL 2019**
Office de requiem pour tous les défunts à 11:00

## ՆԻՍՏ ՈՒ ԿԱՑ ԵԿԵՂԻՑԻՒՆ ՄԷՋ

Ամենուն յատուկ ուշադրութեան եւ նկատառութեան կը հրաւիրենք հետեւեալ պարագաները.

1. Հաւատացեալները պարտին խոստովանիլ՝ Ս. Հաղորդութիւն ստանալէ առաջ:

2. Կանայք երբ հաղորդուելու կը մերձենան, անհրաժեշտ է որ իրենց գլուխը ծածկեն քողով կամ գլխարկով:

3. Երբ Եկեղեցի կ՚երթանք մասնակցելու Ս. Պատարագին կամ այլ արարողութիւններու, պարտինք վայելուչ եւ լուրջ զգեստներ հագուիլ, ուշադիր ըլլալ մեր նիստ ու կացին, զգուշանալ ողջագուրումներէ եւ իրարու հետ խօսակցելէ:

4. Երբ Եկեղեցին ենք ու կը սպասենք մասնակցելու արարողութեան մը կամ արարողութեան աւարտին ենք եւ կը պատրաստուինք դուրս գալ Եկեղեցիէն, պէտք է խուսափիլ աղմկելէ կամ իրար հետ խօսակցելէ : Եկեղեցին աղօթքի Սուրբ վայր է: Այնտեղ՝ շարունակ եւ միշտ ԼՌՈՒԹԻՒՆ եւ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ պէտք է տիրէ:

# «ՈՂՋՈՅՆ»-Ի ԲԱՆԱՁԵՒԵՐ
# SALUT DE PAIX

Յարգելի հաւատացեալներ,
Սուրբ Պատարագի ընթացքին «Սուրբ Ողջոյն» կը փոխանակենք:
Այդ առթիւ, «Ողջոյն» տուողը պէտք է ըսէ.-
Pendant la Sainte Liturgie, on échange le baiser de la paix.
Celui qui salue dit:

1) Յունուարի 5-էն մինչեւ 13-ը:
Du 5 au 13 Janvier
Ծնունդի ութ օրերուն.-
«ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱՒ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱՒ»
«Le Christ est né et s'est révélé»

2) Զատիկէն մինչեւ Համբարձում.-
À partir de Pâques jusqu'à l'Ascension.-
«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ»
«Le Christ est ressuscité d'entre les morts»

3) Միւս օրերուն.-
Les autres jours.-
«ՔՐԻՍՏՈՍ Ի ՄԷՋ ՄԵՐ ՅԱՅՏՆԵՑԱՒ»
«Le Christ s'est révélé parmi nous»
«Ողջոյն» ստացողը պէտք է պատասխանէ .-
Celui qui reçoit le salut réponds:

1- Ծնունդի ութ օրերուն.-
«ՕՐՀՆԵԱԼ Է ԾՆՈՒՆԴՆ ՔՐԻՍՏՈՍԻ»
«Soit bénie la Naissance du Christ»

2- Զատիկէն մինչեւ Համբարձում.-
«ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ»
«Soit bénie la Résurrection du Christ»

3- Միւս օրերուն.-
«ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ»
«Soit bénie la Révélation du Christ»

# ՀՍԿՈՒՄԻ ՀՈԳԵՊԱՐԱՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

*Ամէն Չորեքշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին*

*Մարտ 6 – Ապրիլ 18*

**2019**

**Մարտ 6 – Քարոզիչ՝ Հոգշ. Հայր Վարդան Վրդ. Թաշճեան**

***Պահոց Ընթրիք – Տ. եւ Տիկ. Ասպետ եւ Միրնա Պաճաքեան***

**Մարտ 13 – Քարոզիչ՝ Արժ. Տ. Տրդատ Քհնյ. Թաշճեան**

***Պահոց Ընթրիք – Թէքէեան Մշակութային Միութիւն***

**Մարտ 20 – Քարոզիչ՝ Արժ. Տ. Կոմիտաս Քհնյ. Միրզախանեան**

***Հոգեւոր Հովիւ- Լաւալի Ս. Խաչ Հայց. Առաք Եկեղեցւոյ***

***Պահոց Ընթրիք – Տիկ. Սօնիա Գալայճեան եւ Ընտանիք***

**Մարտ 27 – Քարոզիչ՝ Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեան**

**Առաջնորդ Գանատահայոց Թեմի**

***Պահոց Ընթրիք – Փառանձեմ Գէորգեան, Թամար եւ Շողիկ Գրիգորեան***

**Ապրիլ 3 – Քարոզիչ՝ Գերյ. Հ. Գէորգ Ծ. Վրդ. Զապարեան**

***Ժողովրդապետ Հայ Կաթողիկէ Համայնքի***

***Պահոց Ընթրիք – Տիկ. Ռոզ Տիգրանեան***

**Ապրիլ 10 – Քարոզիչ՝ Պատուելի Յովհաննէս Սվաճեան**

**Հոգեւոր Հովիւ - Հայ Աւետարանական Եկեղեցւոյ**

***Պահոց Ընթրիք – Տիկ. Թագուհի Օտապաշեան եւ Ընտանիք***

**Ապրիլ 18 – Աւագ Հինգշաբթի**

***Աւագ Հինգշաբթի Ընթրիք – Տիկնանց Յանձնախումբ «Մարի Մանուկեան» սրահին մէջ***

**615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com**

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

## ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

# ԾԱՂԿԱԶԱՐԴ
# ԵՒ
# ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՕՐ

## ԿԻՐԱԿԻ,14 ԱՊՐԻԼ 2019

Առաւօտեան ժամերգութիւն՝ ժամը 9:30
Սբ. Պատարագ՝ ժամը 10:30

Յաւարտ Սբ. Պատարագի պիտի կատարուի
Մանուկներու Օրհնութեան կարգ

Դռնբացէք՝ ժամը 12:30

## ԱՒԱՆԴԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Հիւրընկալութեամբ՝
«ԿԱՄԱՐ» Երիտասարդական Միութեան
«Մարի Մանուկեան» սրահին մէջ:

*Մուտքի նուէր $ 20*

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2
Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008
stgregorychurch@gmail.com

## ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

# ՍԲ. ԶԱՏԻԿ

ԿԻՐԱԿԻ, 21 ԱՊՐԻԼ 2019

ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ- ԺԱՄԸ 9:30
ՍԲ. ՊԱՏԱՐԱԳ- ԺԱՄԸ 10:30

ՊԱՏԱՐԱԳԻՉ՝
ԱՐԺ. Տ. ԴԱՒԻԹ ՔՀՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒ

ՍԲ. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԿԱՏԱՐԷ
«ԿՈՄԻՏԱՍ» ԴՊՐԱՑ ԴԱՍԸ

ՅԱՒԱՐՏ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ
ԱՒԱՆԴԱԿԱՆ Ս. ԶԱՏԿՈՒԱՑ ՃԱՇԿԵՐՈՅԹ
«Մարի Մանուկեան» սրահին մէջ:

*Մուտքի նուէր՝ $30*

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066
Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

# ԵԿԷ՛Ք ՊԱՅԾԱՌԱՑՆԵՆՔ
# ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ




Եկեղեցւոյս պայծառութեան եւ առաքելութեան յարատեւման նախանձախնդիր մեր սիրելի հաւատացեալներ,

Սիրով կը յայտնենք, թէ մեր եկեղեցին կարիքն ունի հետեւեալ իրերուն.-

- Օդորակիչի անհրաժեշտ սարքաւորման (Air Conditioner)
- Ս. Սեղանի ոսկեգոյն ասեղնագործ ծածկոց
- Հոգեւորականաց հողաթափեր
- Սկիհի ծածկոցներ եւ Աւետարանի բռնիչ
- Շուրջառներ
- Մեծ Պահքի կամ Աւագ շաբթուան յարդարանք (սեղան եւ ծածկոց)
- Յիսուս Մանկան մսուր
- Եկեղեցւոյ տօնածառ
- Ճրագալոյցի եւ Տեառընդառաջի համար նախատեսուած դուրսի մոմեր
- Ջրօրհնէքի Սափոր
- Ս. Խորանի 2 մեծ վարագոյր կարմիր եւ սեւ

Արդ, անոնք որոնք կը փափաքին իրենց սրտաբուխ նուիրատուութեամբ մասնակից դառնալ եկեղեցւոյ սուրբ առաքելութեան, հաճին կապ պահել եկեղեցւոյ հովիւին կամ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

*«Այս երկրի մէջ ցանէ՛ քու հացդ, որպէսզի երկնքի մէջ զայն հարիւրով պտուղ տուած գտնես»*:

«Հոգեւոր հայելի»

Կանխայայտ շնորհակալութեամբ,

Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

# ԵԿԷ՛Ք ՊԱՅԾԱՌԱՑՆԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ



Սիրելի հաւատացեալներ,

Եկեղեցւոյ Սուրբ Սեղանը, որ պատարագեալ Փրկիչի իջեւանն է, ամէն Կիրակի եւ յատկապէս տաղաւար տօներուն գեղեցիկ եւ պայծառ պահելու համար կոչ կ՚ուղղենք Ձեզի, որ Ձեր գործօն եւ արդիւնաւէտ մասնակցութեամբ կամ ծաղիկներով զարդարել Տիրոջ Ս. Սեղանը, զորս աղբիւրն է Կենաց եւ Իմաստութեան:

Արդ, անոնք որոնք կը փափաքին իրենց սրտաբուխ նուիրատուութեամբ կամ ծաղիկներու մատուցմամբ զարդարուն պահեն Տիրոջ Ս. Խորանը, կրնան կապ պահել եկեղեցւոյ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

Հովիւ
եւ
Ծխական Խորհուրդ

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ հովանու ներքոյ գործող Կիրակնօրեայ Վարժարանը, ներշնչուելով նոր սերունդի հայեցի դաստիարակութեան անհրաժեշտութենէն՝ անմիջական կարիքն ունի Արեւելահայերէն եւ Արեւմտահայերէն լեզուներ դասաւանդող մանկավարժներու, սիրայօժար սկզբունքով:




- Դասընթացքները պիտի կատարուին Կիրակի օրերը ժամը 11-էն սկսեալ:
- Հետաքրքրուողներէն կը խնդրենք դիմել Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066 թիւին:

կամ

- Արեւմտահայերէնի պատասխանատու՝ Շողիկ Գուշաքճըեանին (514) 690-2890:
  Արեւելահայերէնի պատասխանատու՝ Ալինա Պէժանեանին (438) 889-8167:

Հոգեւոր Հովիւ
եւ
Ծխ. Խորհուրդ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ
Մայր Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

# ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

**6 -14 տարեկան երեխաներու համար**

# École de dimanche

## Pour les enfants de 6 à 14 ans

Հաճելի եւ ընկերային մթնոլորտ

- Սաղմոսներ եւ երգեր
- Հայերէն լեզու
- Հաճելի Պատմուածքներ եւ անակնկալներ
- Զուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ



Կիրակնօրեայ Վարժարանը տեղի կ'ունենայ ամէն Կիրակի առաւօտեան ժամը 11-ին:

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար հեռաձայնել՝ եկեղեցւոյ

գրասենեակ (514) 279–3066

Տէր Դաւիթ Քհնյ. Մարգարեան



**École de dimanche**
**Pour les enfants de 6 à 14 ans**
**Dans une ambiance chaleureuse et amicale on Offre aux enfants :**

- Initiation aux Psaumes et chants
- Connaissance de la langue arménienne
- Histoires instructives et divertissements
- Sorties récréatives et successives

**Chaque dimanche à 11 heures**

Pour plus amples informations et inscription
Contacter le secrétariat de l'Église (514) 279-3066
Père David Margaryan

*615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008*
*E-Mail:* stgregorychurch@gmail.com, *www.saintgregory.ca*
*Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal*

**Հայց. Առաքելական**
**Ս. Գրիգոր Լուսաւորիչ**
**Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի**

## Դաշնակի Դասընթացքներ

Փոքրերու եւ չափասներու համար
Սկզբնակներու եւ երաժշտութեան հետեւողներու համար
Անհատական դասընթացքներ պիտի կատարուին՝
Ամէն Կիրակի ժամը 11-էն սկսեալ ,
արհեստավարժ եւ փորձառու դաշնակահարուհի՝
**ԶԻՆԱՅՏԱ ՎԱՐՈՍԵԱՆԻ** հետ:
Շրջանաւարտ երաժշտագէտ McGill համալսարանէն
եւ արժանացած Քեպէքի Ոսկեայ Մետալին
Երաժշտական ծիրէն ներս:

Յաւելեալ մանրամասնութիւններու համար
կապ հաստատել Եկեղեցւոյ գրասենեակ՝
հեռ. (514) 279-3066 / stgregorychurch@gmailcom
կամ ուսուցչուհի՝ Զինայտա Վարոսեանի հետ
հեռ. (514) 945-586 zinaida.varosian@mcgill.ca

## Piano lessons with a concert pianist

All ages – Children / Adults
For beginners & Music trainees
Individual courses will be held every Sunday at 11:00 am

Many years of experience
Theory & harmony
Preparation for Examen and competitions.
Master of Music in Performance from Mc Gill University
Quebec Gold Medalist

For further information
contact to the church office
at (514) 279-3066 / stgregorychurch@gmail.com
or Teacher- Zinaida Varosian
at (514)945- 5816 / zinaida.varosian@mcgill.ca

**615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2**

## Ս. Գրիգոր Լուսաւորիչ
## Պատանեկան Երաժշտական Խումբ

## Jeunesse
## Musicale St-Grégoire d'Outremont

**Պատանեկան Երգչախումբի փորձերը տեղի կ'ունենան**
**Կիրակի օրերը կէսօրէ ետք, ժամը 1:30-ին:**

**Les répétions de la chorale des Jeunes ont lieu**
**Les dimanches à 13:30 heures**

**Յաւելեալ մանրամասնութեանց համար կապ հաստատել եկեղեցւոյ քարտուղարութեան հետ:**

**Pour en savoir plus, veuillez contacter le secrétariat de l'église.**

<u>Արձանագրութեան տարիք 7-15 տարեկան</u>

<u>Âge d'inscription 7 à 15 ans</u>

- Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու հիմնական երաժշտութեան նոթաները, միաժամանակ պիտի մշակուին անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:
- **Durant les rencontres hebdomadaires, les enfants auront l'opportunité d'apprendre les bases de la notation musicale et le solfège.**
- Ուսումնասիրուած ծրագիրը պիտի բաղկանայ ժամանակակից, դասական եւ կրօնական երաժշտական կտորներէ, Ֆրանսերէն եւ Հայերէն լեզուներով:



- **Le répertoire étudié consistera de pièces musicales contemporaines, classiques et religieuses, de langue française et arménienne.**

Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ
**Curé & Conseil Paroissial**

**615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/**
**Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com**
**Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal**

# la collecte

blood donor clinic

## 16e ÉDITION

## LA COLLECTIVITÉ ARMÉNIENNE



**Diocèse Canadien de la Sainte Église Apostolique Arménienne**

Armenian Holy Apostolic Church Canadian Diocese

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Գանատահայոց Թեմ

| Samedi 27 avril<br>10 h à 17 h | Saturday, April 27<br>10 a.m. to 5 p.m. |
| --- | --- |

globule

CENTRE DES DONNEURS DE SANG

**Centre Laval**

1600, boul. Le Corbusier

Entrée porte # 4

HÉMA-QUÉBEC

Au-delà du sang!

GIVE BLOOD. GIVE LIFE.

DONNEZ DU SANG. DONNEZ LA VIE.

# ԱՐԱՐԱՏ ՃԱՄԲԱՐ *2019*

## ՇԱԲԱԹ, Օգոստոս 10--Օգոստոս 17, 2019

Մասնակցիր շաբթուայ մը բացօդեայ ճամբարին, ուր ինքինքդ պիտի զգաս Հայկական մթնոլորտի մէջ եւ ուր պիտի հաստատես երկարատեւ բարեկամութիւններ եւ ուրկէ ակամայ պիտի բաժնուիս անմոռանալի



Դիմումնագիրերը կարելի է հայթայթել www.campararat.ca կայքէջէն:
Հաճեցէք դիմումնագիրերը ղրկել եւ վճարումները կատարել մինչեւ Ապրիլ 1, 2019
Իւրաքանչիւր մասնակցողի համար վճարել $555.00:
Տեղերը սահմանափակ են, հաճեցէք ձեր դիմումը չուշացնել

Յաւելեալ տեղեկութեան համար հաճեցէք մեզ հետ կապ հաստատել campararat@gmail.com հասցէով, կամ հեռաձայնել Անի Ալթունեանին 905-891-8216, կամ դիմել ձեր ծուխի Հոգեւոր Հովիւին եւ Ծխական Խորհուրդին

Արարատ ճամբարին առաքելութիւնն է Գանատահայ երիտասարդին տրամադրել այնպիսի զուարթ, ապահով եւ դաստիարակչական միջավայր մը, ուրան փորձառական հմտութիւնը ունենայ Քրիստոնէական հաւանքին, իր Հայկական պատկանելիութեան, ինչպէս նաեւ կատարելագործէ իր ընկերութեան, Եկեղեցիին ու համայնքին օգնելու յատկութիւնները:

ՊՏՈՅՏ ԴԷՊԻ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՅՐԵՐ

# TRIP TO THE ARMENIAN HERITAGE SITES IN TURKEY

## MAY 7, 2019 — MAY 20, 2019





The Women's Guild Central Council,
with the blessings of
H.G. Bishop Abgar Hovakimyan,
Primate of the Armenian Diocese of Canada,
organizes a

**TRIP TO THE ARMENIAN HERITAGE SITES IN TURKEY**

(Istanbul, Rodosto (Tekirdag), Bursa, Efes, Cappadocia, Kayseri, Adana, Musa Dag).





Cost $2,200 USD (double occupancy)
$2,600 USD (single occupancy)
Included: 13 nights accommodation at nice hotels, Breakfasts & dinners, professional guides (Armenian & English), Bosphorus by boat, transportation with high end buses, domestic flight.





Not included: international airfare, lunches, drinks, balloon tour in Cappadocia.





**Places are limited !**
**Deposit $500 by March 7.**
**Full payment by March 31.**

For details, please contact the Diocese at (514) 276-9479 or contact@armenianchurch.ca, or WGCC Chair, Mrs. Anita Ohanessian at (647) 984-8568 or anita-ot@hotmail.com, or Mrs. Ayda Afarian at (416) 885-0303 or aydaafarian@gmail.com

## ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

## CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR

## ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

### ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Սիրելի հաւատացեալներ,
հաճոյքով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի
կայանատեղիին (parking) մէջ,
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.ե. ժամը 3:




### PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard stret, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

Adress : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2